




անդամներն, իրենց պաշտօնէն հրաժարած կը համարուին:

3. Վարչական ժողովն՝ ամէն ամիս կանոնաւոր ժողովք կը գումարէ, որուն մէջ կարեւոր առաջարկութիւններն ու կարգադրութիւնները կ'ըլլուն: Իսկ արտաքց կարգի ժողովք, այնչափ անգամ կը գումարուի, որչափ անգամ նախագահը հարկաւոր կը համարի, — եւ կամ երբ որ երեք վարչութեան անդամ, գրով կը խնդրէ, որ արտաքց կարգի ժողովք գումարուի:

4. Ժողովք գումարուելու եւ օրինապէս որոշում ընել կարենալու համար, հիմնարկու-

6. Վարչութեան ժողովոյն այն անդամն, որուն՝ երկրորդ աստիճանի ազգականին կամ խնամին խնդրել կ'ելլէ ժողովոյն առջեւ. ոչ այն խորհրդին մէջ, եւ ոչ այն որոշումն ընելու մէջ մաս կրնայ ունենալ:

7. Վարչութեան ժողովոյն կը վերաբերի, ամէն կերպ փոխառութիւն, հիմնադրութեանց եւ օգնութեանց վրայօք եղած կարգադրութիւն, աշխատաց խնդրոյն վերաբերեալ ամէն խնդրներուն որոշումը, արկեղ մէջ գտնուած աւելորդ դրամներուն պողարբութիւնը, — մէկ խօսքով՝ ամէն աս հիմնարկութեան վրայօք եղած կարգադրութիւն:



Կայսերական պալատան նոր զուռը:

թեան կոնդակին Երդ, կէտին համեմատ. ինն անդամի ներկայութիւնը պէտք ըլլալով՝ եթէ կարգաւորեալ անդամներովն, ինը թիւը չ'ամբողջացուի — հիմնարկութեան կոնդակին Երդ կէտին համեմատ — յաւելեալ անդամները պէտք է որ ամբողջացնեն պակասը:

Ասպիտի դէպքին մէջ՝ յաւելեալ անդամները կը կանչուին ձայներին տալու համար: Հաւասար քուէի ատեն, երկցագոյնը կը կանչուի վարչական ժողովին: Բայց միայն մինչեւ որ ինը թիւը լեցուի, ինը թուէն անդին օգնական անդամ ժողովքին մէջ տեղ չ'ունի:

5. Վարչական խորհուրդ միայն վարչութեան շէնքին մէջ կրնայ ըլլուիլ:

8. Վարչութեան ժողովքն՝ իր կարգադրութեանցը հետեւութեամբ, գամբլէրեան հիմնարկութեան պատճառելի ամէն փնտնելուն համար, Եղիսաբեթուպոլսոյ հայ. ուղ. եկեղեցական հասարակութեան եւ Դրամսխուանիայի գաւառական եպիսկոպոսին պատասխանատու է: Ինք իրմէն կ'ենթադրուի, որ եթէ եպիսկոպոսական իշխանութիւնն — ըլլայ՝ տարեկան հաշիւներուն վրայօք եղած քննութեան ատեն, ըլլայ մեղանկեալ ժամանակի մէջ՝ կարեւոր համարած արկեղ քննութեան առթիւն — անկարգութիւն կամ փնտ մ'իմանայ, ամէն կերպ կարգադրութիւն կրնայ ընել, եւ ինչ որ անկարգութիւնը դադրեցընելու եւ պատճառած

փնտրել հատուցանելու համար պատշաճ կը համարի:


9. Վարչական ժողովոյն նիստերը՝ նախագահը կը հրատարակէ եւ կը բանայ: Ինք կը հսկէ ժողովին վրայ. ինք կ'որոշէ օրուան խորհելի նիւթերը, եւ ձայնից բազմութեան համաձայն՝ ինք կը հրատարակէ որոշմունքը: Ժողովքին մէջ ձայնից մեծամասնութիւնը կ'որոշէ: Հաւասար քուէի ատեն՝ նախագահին ձայնը կը վճռէ: Նախագահին խափանման ատեն, իր ընկերներէն՝ ամենէն երիցագոյն աշխարհական անդամը կը կատարէ:

Նախագահը՝ վարչական ժողովք հրատա-

րակ թէ որ վարչական ժողովը հարկաւոր համարի առաջարկուած նիւթին վրայ խորհելու, որպէս ղեւ ասով հիմնարկութեան պատճառելի փնտրի մ'առաջին առնուի, այն ատեն կրնայ այն նիւթին վրայ խորհրդածուիլ:

11. Ամէն մէկ նիստին սկիզբը վաւերացնել, նախագահին ու քարտուղարին ստորագրել տալով: Սակայն, եթէ հապճեպով լինցընելու բան մը կայ՝ արձանագրութիւնն եւ կամ անոր առանձինն մէկ կէտը, կրնայ նիստի ժամանակն ալ սահմանուիլ ու վաւերացուիլ:

12. Նիստին որոշմունքներն եւ ուրիշ



Գլխաւորական նոր պալատը:

բակելու ատեն, պարտական է, առաջարկուած նիւթերուն կարգը՝ ժողովքէն գնէ 24 ժամ յառաջ, անգամներուն գրով ծանուցանել, ՀՀԱՊՐԳՈՒԾ կամ ՀԺԱՆՈՍԵՐԻԿԱԾ նիւթերուն վրայ, այն ժողովքին մէջ խորհուրդ չէ կրնար ըլլուիլ:

10. Ինքնուրոյն առաջարկութիւն ընելու հրաման կայ ամէն կարգաւորեալ անդամի: Բայց պարտաւորեալ է իր առաջարկութիւնը նախագահին ծանուցանել, որ նախագահն՝ եղած առաջարկութիւնը նիւթերուն կարգին մէջ առնու եւ վարչութեան անգամներն առաջարկութեան վրայօք յառաջունէն անդեկութիւն ունենան: Երբ այս չի կատարուի, առաջարկութեան վրայ՝ առաջին ժողովքին մէջ պիտի խորհուի:

գրութիւնները նախագահն ու քարտուղարը կը ստորագրեն: Արձանագրութիւնները պէտք են կնքուիլ: Պատասխաններն ու արձանագրութեան համաձայնութիւնները՝ միայն քարտուղարին ստորագրութեամբ կը հրատարակուին:

13. Գամբլէրեան հիմնարկութեան վարչական ժողովոյն կնքը՝ յաւրդ հռեգարերէն գրութիւնն ունի. „Kameller alapítvány igazgató tanácsának necsétje 1874“ (այսինքն. Գամբլէրեան հիմնարկութեան վարչական ժողովոյն կնքը): Ինքնուրոյն վրայ Արեւուհայկ Եղիսաբեթի պատկերը կայ:

14. Վարչական ժողովքն՝ իրեն եղած ազնիւանաց տրուելի պատասխաններուն ու մրցա-

նական օգնութիւններուն նկատմամբ եղած որոշմանց պարտական է պատճառը տալ։

15. Գամբլէրեան Հիմնարկութիւնն, իբրեւ Եղիսաբեթականոյ Հայ ուղ. եկեղեցական ստացուածք՝ առաքելական-թագաւորական վեհափառութեան վերին Հսկողութեան, Դրան-սիլուանիոյ գաւառական եպիսկոպոսին իրաւասութեանն եւ Եղիսաբեթականոյ Հայածէս ուղ. եկեղեցական Հասարակութեան անընդմիջական Հսկողութեանը տակն է։ — Ուստի եւ զստիք ինչպէս նաեւ Հիմնարկութեան կոնդիցիոն միշտ յարգութեան մէջ պահելով՝ ընտրեալ վարչական ժողովքին կարգադրութեանց իրաւունքը՝ կը տարածի։

Նախ, Հիմնարկութեան դրամագլուխը շահեցնելու՝ երկրորդ՝ շահեր որոշուած վաճառներն ծառայեցնելու վրայ։ — Ուստի եւ մասնաւորապէս,

1. ա. Ամեն բանէն յառաջ աչքին առնել պիտի ունենայ, Եղիսաբեթականոյ մէջ ծնած, Հայ Տօրմ ու մօրմ սերեւել երկսեռ ուղ. Հայածէս աղց կրթութիւնը։

բ. Եղիսաբեթականոյ սեղանի Հայ Տօրմ սերեւել ու Եղիսաբեթականոյ ծնած, երկսեռ ուղ. աղց կրթութիւնը։

գ. Եղիսաբեթականոյ ծնած Հայ մօրմ սերած Եղիսաբեթականոյ սեղանի երկսեռ ուղ. աղց կրթութիւնը։

դ. Եղիսաբեթականոյ վաղեմի գերդաստանէ սերած. բայց Եղիսաբեթականոյն դուրս գալիսն ուղ. Հայ աղց կրթութիւնը։

2. Եղիսաբեթականոյ ծնած Հայ քաղաքացւոյ ազգային այրիի (մարգու) կամ որբեւարիի, եւ Հայ Տօրմ կամ մօրմ ծնացած որբեւրու օգնութիւնը։

3. Բարի վարք ունեցող Եղիսաբեթականոյ սեղանի Հայածէս ուղ. օրրորդաց ամուսնութիւնը։

4. Հոգաբարձութեան հարկաւոր ծախքերուն Հայթայթութիւնը։

16. Հիմնարկութեան զրամագլխէն — զստիք տեղութեան արժէթղթերու վրայ պառկեցնելն ետեւ. — Ընտր փոխ տալու Համար պարտաստ ստակ ըլլայ արկին մէջ, անկէ ամենէն յառաջ Եղիսաբեթականոյ սեղանի Հայ քաղաքացւոյ պէտք է փոխ տալ։ Եթէ Եղիսաբեթականոյ սեղանի Հայ քաղաքացւոյ պէտք չունենայ՝ երկրորդապէս կրնայ նաեւ փոխ տրուիլ Եղիսաբեթականոյ սեղանի ոչ Հայալուծի քաղաքացւոյնը։ Եթէ ասոնցմ ալ չի տրուի փոխ տրուիլ դրամ, այն

ստան երրորդապէս կրնայ տրուիլ, ուրիշ հասարակութեանց մէջ ալ քնակող Հայերու։ Եւ վերջապէս՝ եթէ դեռ չի տրուիլ դրամ, այն ստան կրնայ տրուիլ, առանց բացառութեան ամեն տեսակ ազգայնութեան։

Փոխառութիւնը՝ Եղիսաբեթականոյ 6% առ հարիւր, Եղիսաբեթականոյ շահակողներուն 8% ով կը տրուի։

Փոխառութեան ապահովութեանը համար, միայն կրնապատկեր արժէք ունեցող Ապահովացուցումը՝ վարչական ժողովքը կ'որոշէ, նկատելով՝ կապուած ստացուածքին զուտ եկամուտն եւ ասն եկամտին օրինաւոր բանալին։ Ապահովագրութիւնը պէտք է ըլլալ առաջին անգամ վրայ՝ նկատմամբ անշարժականներու, — իսկ շէնքերը՝ նաեւ կտակի դէմ ապահովացուելու են։

Ցերութեան արժէթղթերն ալ կրնան ընդունուիլ իբրեւ ապահովացուցում, օրական ընթացքին համեմատ, արժէթղթին միայն մէկ երրորդական մասին չափ փոխ ստակ տալով։

Կամանապէս ոսկեղէն եւ արծաթեղէն նիւթեր կ'ընդունուին իբրեւ ապահովացուցում, անոնց արժէքին մէջ երրորդ մասին չափ։

17. Նկատմամբ Համակրթութեան, Հիմնարկութեան պատճենին ք. բ. գ. կէտին ա) ին կարգադրութեանը համեմատ կը հաստատուին յաջորդները։

ա. Հիմնարկութիւն (fundatio) կամ օգնութիւն (stipendium) ինքրեւ իրաւունք ունին։

Նախ, Եղիսաբեթականոյ մէջ քնակող Հայ Տօրմ ու մօրմ ծնած երկսեռ աղաք, որոնք Եղիսաբեթականոյ գարրոցաց ամենէն վերին դասն, որեւիցէ քաղքի կամ հասարակութեան մէջ աւարտած, եւ գտն ընդհանրապէս լաւ աստիճանաւորութիւն ունեցող վկայական ընդունած են։

Երկրորդ. Եղիսաբեթականոյ սեղանի Հայ Տօրմ ծնած երկսեռ ուղղափառ աղաք, միեւնոյն պայմաններով։

Երրորդ. Եղիսաբեթականոյ սեղանի Հայ մօրմ ծնած երկսեռ ուղղափառ աղաք, նոյն պայմաններով։

Չորրորդ. Եղիսաբեթականոյ գուրս գալիսն Հայ քաղաքացւոյ սերունդներն, եթէ ուղղափառ են, եւ քնակած տեղերուն ամենէն վերին դասու գարրոցներն աւարտած են։ Սակայն պէտք պիտի չի տրուի մը համար միայն կրնան որոշեալ թոյլակ մը, եւ օգնութիւն ընդունիլ։

բ. Հիմնարկութիւն կամ օգնութիւն ընդունելու համար անպատճառ հարկաւոր է, լաւ վարք, փութեամբութիւն եւ կրօնի պարտաւորութեանց կատարումը: — Հաւասար վկայութիւններով՝ առաջնութիւն ունի աղքատը: Ասոց մէջէն նախընտրւած են որք աղքատ աղջիկներ:

Գրամական լաւ վիճակի մէջ եղող ծնողաց աղքատ կրնան օգնութեան յոյս ունենալ, եթէ նախ որք ու աղքատ աղքատ գոհացուցուած են:

18. Հիմնարկութիւններուն եւ օգնութիւններուն գումարը՝ յարգապէս կը հաստատուի:

ա. Վարժական կամ միջնակարգ դպրոցաց պատանեակներուն համար. կ'որոշուի չորս հիմնարկութիւն 150 տկան ֆիօրինով:

բ. Մէկ վարժապետի ու վարժապետուհիի մը համար՝ զատ զատ հիմնարկութիւն մը, 150 ֆիօրինով:

գ. Ուսուցչի, հայածէս քահանայացուի, փիլիսոփայութեան, գեղեցիկ արուեստից, բազմարուեստ գիտութեան (technicum) գեղագործութեան, առեւտրայ եւ բարձրագոյն արհեստական դպրոցի պատանեկաց համար, երկու հիմնարկութիւն, երկուքը մէկեւի 250 ֆիօրին:

դ. Իրուուներէ հիմնարկութիւն մը 250 ֆիօրինով — բժշկութեան հիմնարկութիւն մը՝ 250 ֆիօրինով:

19. Եթէ որ մէկ կամ մէկ վիճակի համար չգտնուին պատանեկներ, վարչական ժողովքը՝ հիմնարկութիւնը կրնայ փոխադրել, մէկ հիմնարկութեանէ՝ մէկային: Եթէ վերոյիշեալ հիմնարկութեանց աղըւսուորները գոհացնելէն ետեւ, գեռ փայ չբաշխուած հիմնարկութիւն, անկիայ համակրթութեան օգնութեանը կրնայ դարձուիլ: Եթէ գեռ փայ դրամի գումար մը, զանկիայ յարգող տարւոյն համար պէտք է պահել, ուրիշ հիմնարկութեանց դարձնելու համար:

20. Հիմնարկութիւն խնդրող՝ իրուուներ չունի վերն որոշուած գումարներէն աւելի բան խնդրելու: Այսպիսի խնդրուածքներն ընդունելի պիտի չլլան:

21. Հիմնարկութիւն վատարկող պատանին, սովորաբար կը վայելէ զայն մինչեւ որ ուսումնական տարին լրնցընէ. — եւ թէ որ 23 եւ 24ին տակ եղած պայմանները կատարէ:

Ուսման տարիները կը լրնցընէ պատանին, ան ասոն, երբ իր վիճակին համար վերին իշ-

խանութեամբ որոշուած օրինաւոր տարիներն կ'աւարտէ: Անկից ետեւ իրաւունք չունի հիմնարկութիւն ընդունելու:

22. Ով որ միջանկեալ ժամանակի մէջ ուրիշ հիմնարկութիւն վատարկելու, կամ որեւէ կերպով տարեկան վճարքի մը մասնակից կ'ըլլայ, դատելէրեան հիմնարկութեանէ հրաժարած կը համարուի. եւ հիմնարկութիւնն ետ կը դարձուի: Բայց հիմնարկութեան ամբողջացումը չափ կրնայ մասնակից ըլլալ:

23. Հիմնարկութիւն վատարկող պարտաւորեալ է, ամէն տարւոյ վերջին իր վկայականը վարչական ժողովոյն նախագահին ներկայացնել՝ որ վկայագիրն արհեստական ժողովոյն խորհրդին առկելը կը դնէ:

Ով որ վկայականն առաջիկայ ուսումնական տարւոյն սկսելէն 21 օր յառաջ չի ներկայացընել վարչութեան, այնպիսին անէկ իրեւ հրաժարած կը համարուի. եւ հիմնարկութիւնը՝ վարչութեան ազատ տրամադրութեանը տակ կը ձգուի:

24. Վարչական եւ վերին դպրոցներուն մէջ՝ դասի նիւթերէն եւ բարոյական լաւ վարուելէն գոնե տուային կարգի վկայական չենդուռող, իսկ համալսարանի ուսկիցութեանէն բանեցութիւնը (colloquium) չկատարող, եւ ասոց վրայք օրինաւոր վկայագիրներով ինք զինք չհամարապատգործող՝ հիմնարկութիւնը կը կարսընցընէ:

25. Եղիտարեթուպոյսց ուսումնարանին մէջ սորվող երկու հայ աշակերտի, որոնք հայերէն լեզուն սորվելուն մէջ առաջիններն եղած են, դատելէրեան հիմնարկութիւնը տարուէ տարի. երկու՝ 6 ու 3 ֆիօրինի միջանաբաշխութիւն կու տայ:

26. Հիմնարկութեան թղթին ծրագրէն, կէտին համեմատ, վարչական ժողովքին գործքն է, ամէն տարի նախընտրաբար, հիմնարկութեան վախճանին համեմատ, որոշել՝ բաշխելու սահմանուած գումարներն — ըստ եկամտին:

27. Գրամական օգնութիւն կրնան յուսալ. ա. Անոնք, որոնք թէպէտ տեղութեանն եւ կամ ուրիշ կողմանէ հիմնարկութիւն կամ տարեկան թոշակ մը կը վայելին բայց այս եկամուտը դատելէրեան հիմնարկութեանէն ստանալի գումարէն նուազ է: Այսպիսիները կրնան իրաւունք ստանալ, մինչեւ դատելէրեան հիմնարկութեան գումարին լրման ամբողջութիւնը:

բ. Անոնք՝ որոնք հիմնարկութիւն աստանալու որոշուած էին, բայց իրենց համար հիմնար-

կուժիւն շնաց: Այսպիսիներուն կրնայ օգնութիւն արուիլ մինչեւ այն հիմնարկութեան կէսը:

Ասանկ օգնութիւնները՝ միայն տարւոյ մը համար են:

28. Տարուէ տարի յառաջունէ որոշուելի եւ՝ աղքատաց բաշխուելի գումարին ինչ կերպով գործադրուելուն վայրօք կը սահմանուին յաշորդները:

ա. Ամենէն հարկաւոր բան պիտի նկատուի աղքատանոցին մէջ զեւեղուած ու զեւեղուելի աղքատներուն հոգաւարութիւնը:

Արդուած ըլլալով, որ աղքատաց արուելի գումարէն նախ՝ աղքատանոցին — յառաջունէն սահմանուած տարեկան պիտոյքը ընցուի, այս գումարը՝ զորպիս ժամանակ անոր հարկաւորութիւն կայ, ուրիշ աղքատաց չի կրնար արուիլ: — Թէ աղքատներն՝ աղքատանոցին մէջ, ինչ տեսակ հոգաւարութեան մասն պիտի ունենան, զանկիպ վարչական ժողովքը՝ առան տեսն, ըստ պիտոյցի եւ հոն տեղաւորուած աղքատներուն թուին համեմատ պիտի որոշէ:

Աղքատանոցին մէջ, ըստ կանոնի՝ ծերացած, գործելու անկարող, լաւ վարք ունեցող եղիսարեթուպոյնցի հայեր կ'ընդունուին. որոնք ոչ ստացուածք, եւ ոչ իրենց վայ հոգ տանող ու աւելի կրցող ազգայնականներ ունին: Աղքատանոցին մէջ, երկի մարդիկ զատ, ու կանայք զատ խուցի մէջ պիտի բնակին:

Հոն մտնողը, Գեորգ Գամբլէր հիմնարկութիւն հոգւոյն համար, ամէն շաբաթ, որ մը — չորեքշաբթի օրը — որոշեալ ժամանակի մէջ, ամէնք մէկ տեղ աղօթելու, եւ հիմնադրին մահուանը տարեդարձին իր հոգւոյն համար մատուցուած պատարագին ներկայ ըլլալու, նաեւ կիրակի ու ասնի օրերը՝ հրապարակական աստուածային պաշտամաններկայ գտնուելու պարտական են:

բ. Իրբեւ երկրորդ հարկաւորութիւն կը համարուի, որ եղիսարեթուպոյնց հայ անային աղքատներուն օգնութիւն մատուցուի: Ըս վախճանին համար սահմանուած սուղկէն, յարաբերութեանց ու պարագայից համեմատ, որոշեալ գումար մը կը բաշխուի անային աղքատներուն, մասնաւորապէս ի նկատի առնելով ծերերը, ապիտաններն եւ գործելու անկարողները: Օգնութիւնն ամէն ամիս կը բաշխուի: — Այնպիսի անային աղքատներու՝ որոնք վարչական ժողովքին տեսութեանը համեմատ, իրենց արուած օգնութեան գումարովը կրնան բան մը վատար-

կիլ, օգնութիւնը կրնայ արուիլ՝ երեք ամիսէ երեք ամիս. ու նաեւ կէս տարիէ կէս տարի:

գ. Իրբեւ երրորդ հարկաւորութիւն կը նկատուի անանկ եղիսարեթուպոյնցի ուղղ. հայ աղքատ տղոց զգեստողէն ու դասագիրք բաժնել, որոնք թէ՛ ասոնցմէ զրկուին դպրոց երթալ չեն կրնար:

29. Հիմնարկութեան թղթին Թ. Բ. Գ. գումարն. գ. կէսին համեմատ, որոշուած է որ լաւ բարոյական ունեցող աղքատ եղիսարեթուպոյնցի հայ աղջկանց օգնութիւն ըլլուի: — Աս վախճանին համար, ըստ պարագայից, տարուէ տարի արուելի որոշեալ գումար մը կը սահմանուի:

Ամուսնութեան օգնութիւն գտնելու մէջ, առաջին իրաւունք ունին, որք մնացած աղէկները:

Օգնութիւնն, իրական գրաւով ըլլալու է, այն որք ու ճշմարտապէս աղքատ աղջկանց, որոնք լաւ բարոյական ունեցած են: — Ամուսնութեան օգնութեան զատ՝ մինչեւ 50 ֆիօրինի գումար մըն ալ կրնայ արուիլ, կենաց վիճակի կամ տրուեստ մը եւ այլն. սկսելու համար:

30. Այնպիսի աղքատ, լաւ բարոյական ունեցող եղիսարեթուպոյնց մնած հայ արհեստաւորաց, որոնք իրենց արհեստին հարկաւոր միջոցները հոգալու ի վիճակի չեն վարչական ժողովը — աղքատաց համար որոշուած արկղէն — 50 ֆիօրին մը, օգնութիւն կրնայ ընել:

31. Հիմնարկութեան դրամագլխոյն դպչիլ երբեք չըլլար. մանաւանդ թէ հիմնադրութեան Թ. եւ Գ. յօդուածներուն համեմատ, ամէն տարի հարկաւոր չեղած գումարները՝ գրաւագլուին ամենընելու պիտի գործածուին:

32. Հիմնարկութեան թղթին Թ. Բ. Գ. գումարն համեմատ որոշուած ըլլալով, որ եկամտին մէկ չորրորդ մասովը հոգաբարձութեան աշխատութիւնները վարձատրուին. — սահմանուեցաւ, որ տարուէ տարի արուի.

ա. Նախագահին, իրբեւ վարձք, 300 ֆիօրին.

բ. Արկղակցին, 250 ֆիօրին.

գ. Քարտուղարին 250 ֆիօրին.

դ. Ծառային 120 ֆիօրին:

Գարձեալ՝ հոգաբարձութեան ծախքերուն որոշուած մէկ քառորդ եկամտէն պիտի հոգացուին փայտի, լուսաւորութեան, գրասենեկին եւ ուրիշ մանր բաններուն ծախքերը: Մնացածը հիմնարկութեան Թ. ին համեմատ գործածուելու է:

33. Վարչական ժողովոյն պաշտօնատէր-ներն են.

ա. Վարիշն. որ նախագահ է միանգամայն.

բ. Արկղակալը.

գ. Գարտաւարը:

34. Վերառեւտէն ըլլալով ժողովքին որոշմունքներուն կարգադրին ու գործադիրը՝ պարտական է որոշմունքներուն յարմարիլ եւ զանոնք իր բոլոր ուժով թէ անձամբ գործադրել եւ թէ ուրիշներուն ձեռք գործադրել տալ: Իր անհոգութենէն յառաջ եկած ֆաս-ներուն, յատուկ ստացուածքով պարտական է:

35. Փոխ արուած ստակներն ու անոնց շահերը ժողովուն հսկողութիւնն իրեն սահմանին կը վերաբերի: Ուստի երբ արկղակալէն իմանայ որ պարտականի մը շահ վճարելու ժամանակն անցած է, պէտք է որ պարտականին իմաց տայ, որ պարտքն ու թ օրուան մէջ հասուցանէ: Եթէ ազգեցութիւնն ապարդիւն չիայ, այն ատեն դատաստանական ճամբու դիմելու է. որովհետեւ անկէ հետեւած ֆասները հատուցանելու պարտական է:

36. Երբ որ արկղակալը ծանուցանէ որ պարտականի մը հրկիզութեան դէմ ապահովացուցումը՝ եւ կամ ապահովացուման մէկ մասին վճարման ժամանակակէտը հասած է, վարիշը պարտական է պարտականին իմաց տալու, որ ապահովացուման բաժինը հասուցանէ. վասն զի այլապէ՝ դրամագրութիւն իրմէն եւ կ'առնուի. երբ ազգեցութիւնն առանց հետեւութեան չիայ, պարտականին դէմ անմիջապէս դատախազութիւն բանալու է: Այս եղած ատեն, ձեռքած ապահովացուցումը՝ հիմարկութեան ծախ-ցովը նորոգել տալու է, այնպիսի կերպով մը, որ այս ծախքերն՝ ետքէն պարտականէն առնուին: — Այս ամենուն վըայք վարչութեան տեղեկութիւն տալու է, որ ժողովքն իր ընելիքն ընէ:

37. Որեւէ պարտականի, շահերուն կամ դրամագրելոյն նկատմամբ՝ վճարուելու ժամանակակէտէն անդին, — ատեն չի կրնար շնորհել ոչ վարչական ժողովքն ոչ անոր նախագահն, եւս առաւել հիմարկութեան վարչութեան փաստաբանը:

38. Նախագահն՝ սկսուած դատախազութիւնը բոլոր զօրութեամբ շարունակելու, անոր որպիսութեանը վըայք արձանագրութիւնները գրի անցընել տալու, եւ երեք ամիսէ երեք ամիս վարչական ժողովոյն տեղեկութիւն տալու պարտական է:

39. Վարիշն իշխանութիւն չունի, ինք իր-մէն, հիմարկութեան արկղէն նոյն իսկ ամենա-փոքր գումարը նշանագրելու: Ամէն տեսակ եւ-բերը՝ միայն վարչական ժողովոյն հաւանու-թեամբն ունի իրաւունք վճարել տալու եւ նշա-նագրելու:

40. Աղքատանոցը՝ վարիշն հսկողու-թեան տակն ըլլալով, պարտական է անոր մէջ ըլլալի կանոնապահութեան, կարգին, աղքատ-ներուն հանգստին, կերակրելիւնաց, անկողնոյ մաքրութեանը վըայ եւ այլն, հսկելու, եւ ա-միսը գնէ երկու անգամ աղքատանոցն աչքէ անցընելու:

41. Նախագահը, կրնայ 30 օր. կէտին մէջ եղած պարտականութեանը հսկողութիւնը, վարչութեան ժողովոյն որեւէ անդամին ձեռքը կա-տարել տալ, մանաւանդ երբ ինք խափանուած է:

42. Երբ հիմարկութիւն վայելող կամ օգնութիւն ընդունող ուսանող կամ վարժու-ի մը՝ մահուամբ, դպրոցէն դուրս մնալով, կամ որեւիցէ պատճառաւ սորվելէն դադարի, — կամ երբ որ օգնութիւն ընդունող աղքատ մը մեռնի, կամ ուրիշ պատճառի մը համար, այն օգնու-թիւնը վայելելու ինք զինք անատակ ընէ, նա-խագահ վարիշն, օգնութիւնն, առժամանակեայ գրաւոր կարգադրութեամբ մը անմիջապէս ի կախ կը պահէ ու եղածը վարչական ժողովոյն կը ծանուցանէ:

43. Նախագահ վարիշն, ամէն ուսումնա-կան տարւոյն սկիզբն, եւ մրցանակը բաժնելէն յառաջ, կ'առնու ուսանողներուն դպրոցական վկայականները՝ եւ զանոնք — ներփակած խը-դրուածքով մէկանը — քննելու համար՝ վարչական ժողովոյն առջեւ կը դնէ: Առանց դպրո-ցական վկայագրի մատուցուած աղերսագրի, խորհրդի նիւթ չի կրնար ըլլալ:

44. Վարիշն, ամէն տարւոյն սկիզբը՝ նա-խընթաց տարւոյն հաշիւները — դրոնք նախ, եկեղեցական հասարակութիւնը քննած է — արկղակալէն յօրինելի հաշիւներուն բովանդա-կութիւնը, պահեստի դրամին վըայք ցուցակ մը, եւ պարտական ձեռացաններուն ցուցակը՝ վարչա-կան ժողովոյն ներկայացընելու պարտական է:

45. Նախագահը կը հսկէ, որ ուսանողաց եւ աղքատաց տրուելի դրամին եւ օգնութիւն-ները՝ ճշգրտութեամբ ժամանակին անոնց ձեռքը հասնի:

46. Նախագահը պարտական է ատեն ա-տեն օրական հաշիւներն աչքէ անցընելու: Իրաւունք ունի որեւէ ատեն արկղը քննելու, եւ

տեսածներուն վրայոք վարչական ժողովոյն տեղեկութիւն տալու:


47. Նախագահին օգնական է իր գործքերուն մէջ քարտուղարն, որ կը գրէ արձանագրութիւնները: — վաւերական թղթերը:

48. Քարտուղարը պարտական է վարչական ժողովոյն եւ նախագահին հրամանները կատարելու:

49. Նախագահին հետաւորութեան կամ խափանուած ատենն՝ իր ընելի գործքերը կը կատարէ եւ նախագահի իրաւունքները կը գործադրէ, վարչութեան ամենէն երկացոյցն անդամը:

ապահովագրութիւններու վրայոք ցուցակ մ'ուշննալու: Երբ տեսնէ, որ պարտապանի մը ապահովագրութեան ժամանակը լրջնալու վըայ է, անկէ գննէ՝ 15 օր յառաջ վարչութեան իմաց տալու է:

53. Արկղակալը կը հսկէ գանձուն վըայ. կը հօգայ ամեն գրութիւնները. ելքերն ու մուտքերը. եւ անոնց վըայոք օրական հաշիւ կը բռնէ: Ցարւոյն վերջն՝ օրական հաշիւներէն քաղելով՝ ըստ օրինի կը շինէ հաշիւները, եւ զանոնք ամեն տարւոյն վերջը՝ 15 օրուան մէջ վարչութեան կը ներկայացընէ: Քարտուղարը՝



Սէնթնէր - Ետրատ:

50. Քարտուղարը կը գրէ ժողովքներուն արձանագրութիւնը, կը յօրինէ վարչութեան վերաբերեալ գրութիւններն եւ կը ստորագրէ զանոնք նախագահին հետ: — Պատասխաններն ու արձանագրութեանց լուծանդակութիւնը՝ կը ստորագրէ միայն քարտուղարն ու գուրս կու տայ:

51. Արկղակալը կը խնամարկէ հիմնարկութեան ստացուածքին հաշիւները. ծրագիր կու տայ աւելորդ ստակներուն առժամանակեայ շահեցուցման նկատմամբ. եւ երեք ամիս մէյ մը վարչութեան ժողովոյն կը ներկայացընէ:

52. Արկղակալը պարտական է, պարտապաններէն՝ կուսկի գէմ՝ ապահովացուցման գրութիւններն եւ անդորրագիրներն ուզելու եւ զանոնք պարտաթղթերուն հետ պահելու եւ

հաշիւներն օրինակելով՝ զանոնք վերաբնութեան համար, վարչութեան առջեւ կը գնէ: Վարչական ժողովքը՝ քննած հաշիւները, հիմնարկութեան թղթին Զ. Բ. Ե. յօդուածին համեմատ, քննելու համար Եղիարեթուպոլսոյ հայ ուղղ. եկեղեցական հասարակութեան կը ներկայացընէ: Եղիարեթուպոլսոյ ուղղ. հայ եկեղեցական հասարակութիւնը քննած հաշիւներուն ելքերն ու մուտքերը ցուցընող պատճեններով իրեն ներկայացուցած օրինակին վըայ՝ իր խորհրդածութիւններն ընելէն ետեւ, վերջնական քննութիւն ու արձակումն ընդունելու եւ կամ հարկաւոր տեսած տրամադրութիւն մ'ընելու համար՝ Գրամսիլուսանդի գաւառական եպիսկոպոսին կը ներկայացընէ:



Ան հայ ուղղ. եկեղեցական հասարակութեան ժողովքին մէջ, ուր որ գամեւելերեան հիմ. նարկութեան հաշիւները կը քննուին. վարչական ժողովոյն նախագահը, խորհրդականներն ու պաշտօնատեղիները մաս չեն կրնար ունենալ:

54. Արկղակալն, առանց նշանագրի, արկղէն բան մը չի կրնար տալ. իսկ նշանագիրը՝ միայն վարչական ժողովքին նիստը կրնայ տալ նախագահին եւ քարտուղարին ստորագրութեամբ: Արկղակալը պարտական է ամէն վճարողէն անգործագիր առնելու: Արկղէն տալի ստակներն՝ անմիջնորդաբար, միայն արուելի անձանց ձեռքը պէտքէ որ յանձնէ:

55. Արկղակալը պարտաւորեալ է, պարտականներուն — շահուն կամ դրամագլխին եւ մնացած պարտքին որպիսութիւնն ու որքանութիւնը՝ ժամանակին անցնելէն — ամէնէն ուշ 24 ժամ ետքը — գրով ծանուցանել: Իր յապաղմանն ու անփութութենէն յառաջ եկած վնասներուն համար՝ պատասխանատու է:

56. Արկղակալն՝ ամէն, իր անհոգութենէն յառաջ եկած վնասին, ստացուածքով պատասխանատու է:

57. Արկղակալը պարտաւորեալ է. վարչական ժողովոյն եւ նախագահին հետգանդելու:

58. Քարաւաղարը պարտական է վարչական ժողովոյն եւ նախագահին հետգանդելու:

59. Գամեւելերեան հիմնարկութեան պաշտօնատեղիները՝ ձայնի իրաւունք ունենալով՝ միայն վարչական ժողովքէն կրնան ընդունիլ — Ռւրիշ կողմանէ՝ խորհրդի եւ որոշում ընելու

մէջ՝ մասն չեն կրնար ունենալ: — Վարչական ժողովոյն այն անդամներն, որոնք չահակից եւ կամ իրարու հետ, ըստ օրինաց՝ արգելեալ ազգականութեան վեճակի մէջ են, այն խորհրդին մէջ մաս չեն կրնար ունենալ:

60. Ի դիպուածի որ վերին իշխանութեամբ կամ հրամանաւ, պաշտօնատեղաց վարձքը՝ յարաբերութեանց եւ եկամտին համեմատ, փոփոխութեան տակ մտնէ, իրենք խօսքմը՝ ընելու իրաւունք չունին:


61. Պաշտօնատեղաց գործքը՝ կրնայ ատենով փոփոխութեամ տակ մտնել: Այս կանոնագրութեանց մէջ գրուած պաշտօնատեղաց պարտաւորութիւններն՝ ալ կրնան փոփոխուիլ կամ աւելցուիլ:

— Առանձին պաշտօնատեղի մը գործքը կրնայ բուրովին վերցուիլ, առանց հիմարկութեան դէմ պահանջմունքներ յարուցանելու:

Ինք իրեն կը հասկըցուի, որ 60րդ. եւ այս կէտին, եւ ընդհանրապէս այս կանոններուն որեւէ կէ-

տին նկատմամբ ըլլուելի միայն ան ճամբով կրնան ըլլուիլ, որ ճամբով որ այս կանոնները դրուեցան: Այս ինքն կրնան վարչական ժողովքին կողմանէ առաջարկուիլ, Եղիսաբեթու պոյսոյ ուղղ. հայածէս եկեղեցական հասարակութենէն ընդունուիլ, եւ հոնգարական թագաւորական պաշտօնեային ձեռք, վեհափառ թագաւորին անուամբ ամբարցուիլ:

62. Վարչական ժողովոյն կարգաւորեալ եւ յաւելեալ անդամներն — ինչպէս նաեւ



«Յիսուս Փրկիչ» Նկեղեցին:

